Co-funded by the Tempus Programme of the European Union

UFAR UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE

TNE_QA Promoting quality and recognition of transnational education in Armenia and Georgia

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՏՐԱՆՍԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Մշակված է ՏԵՄՊՈՒՍ «Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում» (ՏԱԿ_ՈԱ) նախագծի շրջանակում



## Բովանդակություն

Նախագծի կառավարման թիմի կողմից....4

ՏԵՄՊՈՒՍ «Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում» (ՏԱԿ_ՈԱ) նախագծի կոնսորցիումը....3

Նախաբան....4

I. Նախագծի ներածական մաս և մեթոդաբանություն....1

II. Տրանսազգային բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականություն....1

1. Քաղաքականության ուղենիշները կառավարության մակարդակում....1
2. Քաղաքականության ուղենիշները բուհերի մակարդակում....4
3. Քաղաքականության ուղենիշներ ուսանողական կառույցների համար....6
4. Քաղաքականության ուղենիշներ որակի ապահովման մարմինների համար....8
5. Քաղաքականության ուղենիշներն ակադեմիական ճանաչման մարմինների համար....11
6. Քաղաքականության ուղենիշները մասնագիտական մարմինների համար....13

III. ՏԱԿ ՈԱ չափորոշիչ....1

1. ՏԱ կրթության մատակարարների ՈՆԱ չափորոշիչ....1
2. ՏԱԿ մատակարարների ՈԱԱ չափորոշիչ....2
3. ՈԱԱ տրանսազգային մատակարարների ճանաչման ընթացակարգ....4

IV. ՏԱԿ ՈԱ ընթացակարգ....1

1. Հայաստան՝ ՏԱԿ ՈԱ ընթացակարգ....1
2. Վրաստան՝ ՏԱԿ ՈԱ ընթացակարգ....4
3. ՈԱԱ տրանսազգային մատակարարների ճանաչման ընթացակարգ....7
4. Տրամադրված տրանսազգային որակավորումների ակադեմիական ճանաչման ընթացակարգ....9

Այս նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ: Սույն հրատարակությունը ներառում է լոկ հեղինակների տեսակետները, ուստի հանձնաժողովը չի կարող պատասխանատվություն կրել սույն փաստաթղթում զետեղված տեղեկատվության կիրառության համար:

## Նախագծի կառավարման թիմի կողմից

Հարգելի՛ ընթերցող,



*«Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում»* (TNE_QA)-ն Տեմպուս նախաձեռնության շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորված քառամյա նախագիծ է (2013-2017): «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամը պատիվ է ունեցել հանդես գալ որպես նախագծի համակարգող՝ առաջնորդվելով Հայաստանի և Վրաստանի բարձրագույն կրթության համակարգերի կարողության բարելավման տեսլականով ու նպատակ հետապնդելով արդյունավետ մատուցել որակի ապահովման միջազգային դերակատարների փորձը թե՛ ինստիտուցոնալ, թե՛ ազգային մակարդակներում՝ սովորելով եվրոպական փորձից և առաջնորդվելով *ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի (UNESCO/OECD) Անդրսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղեցույցով:*

Նախագծի քառամյա գործունեության արգասիքը «Հայաստանում և Վրաստանում տրանսազգային բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականության, չափանիշների և ընթացակարգերի մշակման ուղեցույցներն» են, որոնք կուղղորդեն շահակիցների ջանքերը՝ միտված որակի բարձրացմանը և կխթանեն տրանսազգային բարձրագույն կրթության կարգավորումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում: Նախագիծը միտված է իր կենսափուլի չորս տարիների ընթացքում ձեռք բերված փորձի փոխանակման արդյունքում հաստատել ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի (UNESCO/OECD) ուղեցույցներին համահունչ որակի ապահովման կառուցակարգեր: Այն խրախուսում է բարձրագույն կրթության քաղաքականություն մշակողներին և շահակիցներին շարունակել զարգացնել փոխուսուցման մշակույթը ՏԱ կրթության մատակարարման ՌԱ նպատակով՝ հաշվի առնելով հետ-սովետական կրթական համատեքստը:

Նախագծի ձեռքբերումը հնարավոր չէր լինի առանց նախագծի կոնսորցիումի մեջ ներգրավված հաստատությունների և գործընկերների աջակցության և օժանդակության: Ցանկանում ենք մեր անկեղծ շնորհակալությունը հայտնել բոլորին նախագծի ամբողջ ընթացքում ցուցաբերած նշանակալի ներդրման, իմաստուն առաջնորդության, սրտացավ համագործակցության և կառուցողական քննադատության համար:

Ցանկանում ենք մեր հատուկ շնորհակալությունը հայտնել աշխատանքային փաթեթների ղեկավարներին, այդ թվում՝ Անկա Գրեեր (Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն, ՄԹ), Քրիստոֆ Տերրասս (Մենեջմենթի զարգացման եվրոպական հիմնադրամ, Բելգիա), Միքայելա Մարտին (ՅՈՒՆԵՍԿՕ-ի

Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտ, Ֆրանսիա), Մայա Գելաշվիլի (Կրթության որակի բարելավման ազգային կենտրոն, Վրաստան) և Ռուբեն Թոփչյան (Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, Հայաստան) նախագծի վերջնարդյունքների համար իրենց ցուցաբերած նշանակալի ներդրման համար:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Եվրոպական հանձնաժողովին և մասնավորապես Եվրոպական հանձնաժողովի կրթության, աուդիովիզուալ և մշակութային գործադիր գործակալությանը՝ նախագծի կյանքի կոչման հնարավորության համար: Վերոգրյալից զատ հարկ է նշել նաև, որ Եվրոպական հանձնաժողովի կրթության, աուդիովիզուալ և մշակութային գործադիր գործակալության, հայկական և վրացական ազգային Էրազմուս+ գրասենյակների թիմերի աջակցությունը հիմնաքարային է եղել նախագծի արդյունավետ կառավարման և իրականացման համար:

Արայիկ Նավոյան, PhD

TNE_QA նախագծի համակարգող, Հայաստանում ֆրանսիական համալսարանի պրոռեկտոր

Հարգելի՛ գործընկերներ,



ՏԱԿ_ՈԱ հայկական և ԵՄ բարձրագույն կրթական համակարգերի մտավոր առաջնորդների համատեղ աշխատանքի արգասիքն է, որի նպատակն է տարածաշրջանում տրանսազգային կրթության որակի ապահովումը նոր հարթակ բարձրացնել՝ համապատասխան միջազգային միտումներին և ընդունված ստանդարտներին: Որպես ուղեցույց թիմն օգտագործել է ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի *Անդրսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղեցույցները* նպատակ ունենալով Հայաստանի և Վրաստանի համար ստեղծել որակի ապահովման համակարգ՝ բարձրագույն կրթության որակի պահպանման առումով, երբ խոսքը վերաբերում է անդրսահմանային մատակարարներին:

ՏԱԿ_ՈԱ-ն Հայաստանի և Վրաստանի ձեռնարկած գլխավոր քայլերից է՝ ապահովելու անդրսահմանային կրթություն տրամադրող մատակարարների համապատասխանությունը ազգային ռազմավարությանը: Վերոգրյալից զատ՝ նախագիծը նաև նպատակ է հետապնդում բարձրագույն կրթական համակարգը նոր մակարդակի վրա բարձրացնել ինչպես ազգային և տարածաշրջանային, այնպես էլ՝ միջազգային հարթակներում: Նախագիծը մեծապես նպաստել է հետխորհրդային համատեքստում տրանսազգային մատակարարների ներկայիս իրավիճակի վերանայմանը, մարտահրավերների ամբողջական գնահատմանը, ներկայիս ու ակնկալվող համակարգերի համատեղելիության գնահատմանը և հիմնական բացթողումների վերհանմանը: Խորհրդատվությունների ձևաչափը որդեգրած սույն նախագիծը նաև իր աջակցությունն է բերել Հայաստանի և Վրաստանի իշխանություններին տրանսազգային կրթության որակի ապահովման և տրամադրված որակավորումների ճանաչման հետագա քայլերի վերաբերյալ:

Այս քառամյա ճանապարհորդության երկայնքով նախագծի մասնակիցները տեղեկատվություն քաղեցին Հայաստանում և Վրաստանում ՈԱ համակարգերի, ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի անդրսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղեցույցների և երկու երկրների մշակութային առանձնահատկություններին և արժեքներին համահունչ դրանց կիրառության մասին: Սա ամբողջ թիմի քրտնաջան աշխատանքի արգասիքն է, որի նպատակն է ապահովել լավագույն համադրելի և միևնույն ժամանակ իրավական մոտեցումը՝ երաշխավորելու դրա կիրարկելիությունը:

Մեր խորին համոզմունքն է, որ քաղված դասերը անգնահատելի են, արժեքավոր և օգտակար Հայաստանի ակադեմիական կյանքի համար և դրա սահմաններից դուրս: Սա ՏԱԿ_ՈԱ կոնսորցիումի գլխավոր շահագրգիռ կողմերի ներդրումն է և մենք լիահույս ենք, որ այն կներառվի Հայաստանի և Վրաստանի

ղեկավարությունների կողմից հրապարակված ՏԱԿ_ՈԱ-ի նոր շրջանակի մեջ՝ տրանսազգային մատակարարներին համապատասխան որակի ծառայություններ ապահովելու համար՝ նպատակ ունենալով պաշտպանել համակարգերը զեղծարարություններից:

Մեր խորին երախտիքն ենք հայտնում Եվրոպական հանձնաժողովի կրթության, աուդիովիզուալ և մշակութային գործադիր գործակալությանը համակարգի կայուն զարգացման մեջ իր անգնահատելի ներդրման համար:

Սուսաննա Կարախանյան, բ.գ.դ.

Նախագծի հեղինակ և կառավարման թիմի անդամ

## ՏԵՄՊՈՒՍ «Տրանսազգային կրթության որակի ապահովումն ու ճանաչումը Հայաստանում և Վրաստանում» (ՏԱԿ_ՈԱ) նախագծի կոնսորցիումը

<table>
<tr><td rowspan="6">Հայաստան</td><td>Հայաստանում ֆրանսիական համալսարան</td></tr>
<tr><td>Հայ-ռուսական համալսարան</td></tr>
<tr><td>Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն</td></tr>
<tr><td>Կրթության որակ</td></tr>
<tr><td>ՀՀ Կրթության և գիտության նախարարություն</td></tr>
<tr><td>Հայաստանի ամերիկյան համալսարան</td></tr>
<tr><td>Բելգիա</td><td>Մենեջմենթի զարգացման եվրոպական հիմնադրամ</td></tr>
<tr><td rowspan="3">Ֆրանսիա</td><td>Ժան-Մուլեն Լիոն 3 համալսարան</td></tr>
<tr><td>Էքս-Մարսել համալսարան</td></tr>
<tr><td>ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կրթության պլանավորման միջազգային ինստիտուտ</td></tr>
<tr><td rowspan="6">Վրաստան</td><td>Կովկասի համալսարան</td></tr>
<tr><td>Ակակի Ծերեթլիի անվան համալսարան</td></tr>
<tr><td>Բաթումիի ծովային ակադեմիա</td></tr>
<tr><td>Կրթության որակի բարելավման ազգային կենտրոն</td></tr>
<tr><td>Կրթական քաղաքականության պլանավորման միջազգային ինստիտուտ</td></tr>
<tr><td>Վրաստանի Կրթության և գիտության նախարարություն</td></tr>
<tr><td>Գերմանիա</td><td>Զիգենի համալսարան</td></tr>
<tr><td rowspan="2">Միացյալ թագավորություն</td><td>Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալություն</td></tr>
<tr><td>Բաց սպա համալսարան</td></tr>
</table>

## Նախաբան

Տրանսազգային բարձրագույն կրթությունն իրականացվում է մի շարք ձևերով՝ առերես (ուսանողների մեկնում արտերկիր, կամ արտերկրում տեղակայված կամպուսներ), հեռակա ուսուցում (օգտագործելով մի շարք տեխնոլոգիաներ, ներառելով օնլայն ուսուցում) և այլն: 2005թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՏՀԶԿ-ի համատեղ ջանքերով մշակվեց և հրապարակվեց *Անդրսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղեցույցները*: Որպես մեկնարկային կետ դիտարկելով յուրաքանչյուր երկրում պարտականությունների շրջանակի բաշխումը, ուղեցույցներում խորհրդատվություն էր ներառված վեց շահագրգիռ կողմերին՝ կառավարություններ, բարձրագույն կրթական հաստատություններ/մատակարարներ (ներառյալ դասախոսական կազմ), ուսանողական կառույցներ, որակի ապահովման և հավատարմագրման մարմիններ, ակադեմիական ճանաչման և մասնագիտական կառույցներ: Ուղեցույցները հորդորում են մանրազնին քննություն, երբ խոսքը վերաբերում է տարբեր մակարդակներում բարձրագույն կրթության տրամադրման տարբեր տեսակների, ինչպես նաև տրանսազգային կրթության որակի ապահովման տրամադրման բազմազանությունը:

ՏԵՄՊՈՒՍ ՏԱԿ_ՌԱ ծրագրի շրջանակներում (2013-2017) կոնսորցիումը նպաստեց հետսովետական երկու երկրների՝ Հայաստանի և Վրաստանի ուղեցույցների կիրառելիության խորքային ուսումնասիրությանը: Արդյունքները ներկայացված են երկու երկրների տրանսազգային կրթության որակի ապահովման քաղաքականության, չափանիշների եւ ընթացակարգերի ընթացիկ ուղեցույցներում: Տվյալ ուղեցույցները, ի հավելումն ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, ըստ երկրների առանձնահատկությունների առաջարկում են գործողություններ վեց շահագրգիռ կողմերին՝ կառավարություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ / մատակարարներ (ներառյալ դասախոսական կազմ), ուսանողներ, որակի արտաքին ապահովման մատակարարներ ու հավատարմագրման մարմիններ, ակադեմիական ճանաչման մարմիններ եւ մասնագետներ: Ուղեցույցները, ինչպես նաև ծրագրի բոլոր մշակված գործիքները և փաստաթղթերը միտված են օգնելու կառավարություններին, որակի ապահովման գործակալություններին և այլ շահագրգիռ կողմերին որակի չափանիշները բարելավելու հարցում լավագույն փորձի փոխանակման միջոցով: Նրանք լրացնում են ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ-ի ուղեցույցներին և հիմք են հանդիսանում սույն փաստաթղթի համար՝ պարզաբանելով, թե գործնականում ինչ կարելի է անել ազգային մակարդակում:

Ի հավելումն ՏԱ կրթություն իրականացնող երկրներին և տարածաշրջանին բնորոշ ուղեցույցներին, այս ձեռնարկի մեջ ընդգրկված են որակի արտաքին և ներքին ապահովման չափորոշիչներն ու ընթացակարգը, ինչպես նաև տրանսազգային որակի արտաքին ապահովման մատակարարների ճանաչման ընթացակարգը: Չափորոշիչները և ընթացակարգերը մշակվել են ծրագրի արդյունքում և առաջին անգամ փորձարկվել են

ծրագրի շրջանակներում՝ կոնկրետ համատեքստերում լեգիտիմությունն ապահովելու համար:

Հաշվի առնելով խնդրո առարկա երկրների համատեքստերի նմանությունը Արևելյան Եվրոպայի երկրների համատեքստերին, արդյունքները կարող են կիրառելի լինել այս երկու երկրներից դուրս և կարող են օգտակար լինել կրթական ոլորտի մասնագետների, քաղաքականություն մշակողների և ընդհանուր առմամբ բարձրագույն կրթության շահագրգիռ կողմերի համար:

## I. Նախագծի ներածական մաս և մեթոդաբանություն

Բանիմաց և իրազեկ աշխատուժի շուկայի պահանջներին բավարարելու նկատառումներով՝ ընդլայնվեց բարձրագույն կրթության մատակարարների բազմազանությունը: Ավանդական տարածքահեն կրթությունն այլևս որակավորումներ ձեռքբերելու միակ միջոցը չէ և այնպիսի կրթական ձևերը, ինչպիսիք են հեռակա ուսուցումն ու մի քանի շրջաններում տրանսազգային կրթությունը ավելի մեծ տարածում են գտնում, քան մնացած ձևերը: Վերոգրյալ միտմանը համընթաց արձանագրվել են մի շարք մտավախություններ վերը թվարկված ձևերի կարգավորման, որակի վերահսկման և սպառողի պաշտպանության վերաբերյալ: Անկախ կրթության տրամադրման ձևից, որակի ապահովումը և ստանդարտների պահպանումը կարևորագույն գործոն են համարվում մի շարք ազգային և միջազգային հաստատությունների, կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և ուսանողների համար:

Այս միտումը զգալի է հետսովետական երկրներում, որտեղ տարածված են մասնաճյուղային կամպուսները և տրանսազգային կրթության մատակարարումը: Բարձրագույն կրթության հասանելիության և սեփական երկրում օտարերկրյա որակավորում ստանալու հնարավորությունների ընդլայնման հետ մեկտեղ կան մի շարք թերություններ՝ կապված կրթության տրամադրման հետ, որոնցից գլխավորն այսպես կոչված «դիպլոմների դարբնոց» կրթական հաստատություններն են: Մոտավոր հաշվարկներով Հայաստանում կան 10 օտարերկրյա հաստատությունների մասնաճյուղային կամպուսներ, Վրաստանում դրանց թիվը յոթն է: Գտնվելով հյուրընկալող երկրի իրավական դաշտում՝ այս համալսարանների որակի ապահովումն իրականացվում է կամ ուղարկող երկրի որակի ապահովման մատակարարների կողմից, կամ ՈԱ-ն պարզապես ընդունող հաստատության առաջնահերթությունների ցանկում հանդես չի գալիս: Նմանատիպ մոտեցումը պոտենցիալ խնդիրներ է ստեղծում թիրախային երկրների բարձրագույն կրթական համակարգերի համար: Վերոգրյալ խնդիրների շարքին կարելի է դասել հյուրընկալող երկրի մշակութային և լեզվական առանձնահատկությունները, բավարար որակավորում չունեցող դասախոսական կազմի առկայությունը, բարձրագույն կրթական համակարգի խորացող բեկորացումը և, չնայած աննշան, բայց կեղծ դիպլոմների առկայությունը:

Հաշվի առնելով առկա խնդիրները՝ ՏԵՄՊՈՒՍ ՏԱԿ_ՈԱ նախագծի շրջանակներում մշակվել է օժանդակող շրջանակ՝ խթանելու տրասնազգային կրթության կարգավորումը, որակի ապահովումը և ճանաչումը Հայաստանում և Վրաստանում: Այս նախագծը մեկնարկել է 2013 թվականին՝ նպատակ հետապնդելով լրացնել այն բացթողումները, որոնք ծառացած են տրանսազգային կրթության մատակարարների առջև՝ աջակցելով ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿի ուղեցույցներին համապատասխան որակի ներքին և արտաքին ապահովման

կառուցակարգերի մշակմանը, հետագայում ընդլայնելու որակը և խթանելու Հայաստանում և Վրաստանում տրանսազգային կրթության իրականացման կարգավորումն ու ճանաչումը:
Կոնկրետ նպատակներ են մշակվել հետևյալի շուրջ.

- Հայաստանի և Վրաստանի ԲՈՒՀ-երի ու որակի ապահովման գործակալությունների կարողությունների զարգացում՝ արդյունավետ կերպով կառավարելու ՏԱԿ որակի ապահովումը:
- Տրանսազգային կրթություն տրամադրող հաստատություններում որակի ապահովման մեխանիզմների մշակում և ներդրում:
- Որակի ապհովման չափանիշների և գործընթացների մշակում և ամբողջականացում, որպեսզի որակի արտաքին ապահովման համակարգերը արդյունավետ կերպով կառավարեն ՏԱԿ տրամադրող համալսարանների որակի ապահովումը:
- Հայաստանում և Վրաստանում ՏԱԿ-ի դրույթների կարգավորման, որակի և ճանաչման ապահովում:

Նախագծի մեթոդաբանությունը ներառում է կարողությունների ստեղծում և զարգացում, ՏԱԿ մատակարարների համար նախատեսված ՈՆԱ և ՈԱԱ շրջանակների պիլոտային կիրառում: Նախագծի ԱՓ 1-ին փուլում կարողությունների ստեղծումից հետո գործընկեր երկրները ստանձնեցին քաղաքականություն և կարգավորումներ մշակելու պատասխանատվություն, մինչ եվրոպական գործընկերները նպաստեցին գործընթացին՝ տրամադրելով ընդգրկուն ուղեցույցներ, կիսելով իրենց իմացությունը և աշխատելով փորձնական արդյունքների վրա:

Համոզվելու համար, որ մշակումները համապարփակ են, ծառայում են երկրի կարիքներին և համապատասխանում են տեղական քաղաքականություններին, նախագծի աշխատակազմը իրականացրել է փաստահավաք, որի հիման վրա մշակվել է ՏԱԿ ՈԱ շրջանակ՝ ինչպես ԲՈՒՀ-երի, այնպես էլ՝ ՈԱ գործակալությունների համար: Փաստահավաք ուսումնասիրությունն իրականացվել է ուղարկող և ընդունող երկրների ՈԱ չափանիշների գնահատման ներկայիս փորձի և ընթացակարգերի շուրջ: Ստանդարտ հետազոտության մեթոդաբանությունը մշակվել է այնպես, որ հնարավոր լինի գործընկեր երկրների չափանիշների և գործընթացների համեմատական վերլուծություն անցկացնել: Հետազոտման մեթոդները ներառում են, բայց չեն սահմանափակվում, փաստաթղթերի հետազոտություն, հարցազրույցներ, գործընթացների և ընթացակարգերի դիտարկում և վերանայում:

Հետազոտման արդյունքում գործընթացները մեկնարկեցին ԲՈՒՀ-երի և ՈԱԳ-երի ՈԱ չափանիշների և գործընթացների մշակման նախաձեռնությամբ: Մշակված քաղաքականությունները և գործընթացները փորձարկվեցին ԵՄ գործընկերների աջակցությամբ: Արդյունքները ամփոփվեցին Հայաստանի և Վրաստանի ՈԱԱ համատեղ զեկույցում, որը նաև տրամադրում էր մի շարք առաջարկություններ և դիտարկումներ, ինչպես նաև վերհանում լավագույն փորձի և զարգացման ոլորտները:

Ընթացիկ ուղեցույցները ներկայացնում են այն առաջարկությունները, որոնք ներկայացված են վերջնական զեկույցում: Առաջարկությունները ներկայացված են ի

հավելումն ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀՁԿ-ի ուղեցույցներին և արտացոլում են երկրներին բնորոշ կարիքները:

## II. Տրանսազգային բարձրագույն կրթության որակի ապահովման քաղաքականություն

### 1. Քաղաքականության ուղենիշները կառավարության մակարդակում

**ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ ուղենիշները կառավարությունների համար**

Կառավարությունները կարող են ազդեցիկ, եթե ոչ պատասխանատու լինեն համապատասխան որակի ապահովման, որակավորումների հավատարմագրման և ճանաչման հարցում: Բարձրագույն կրթության համակարգերում վերջիններս ստանձնում են քաղաքականության համակարգողի դերակատարությունը: Այնուամենայնիվ, այս ուղեցույցների մեջ մատնանշվում է նաև, որ որոշ երկրներում որակի ապահովման վերահսկողությունը կատարվում է ենթաօրենսդրական պետական մարմինների կամ հասարակական կազմակերպությունների կողմից:

Այս համատեքստում կառավարություններին խորհուրդ է տրվում.

ա) Ստեղծել, կամ խրախուսել ընդգրկուն, արդար և թափանցիկ գրանցման կամ լիցենզավորման համակարգի ստեղծումը անդրսահմանային բարձրագույն կրթության տրամադրողների համար, ովքեր ցանկություն են հայտնում գործել իրենց տարածքում:

բ) Ստեղծել, կամ խրախուսել համապարփակ կարողությունների ստեղծումը վստահելի որակի ապահովման և անդրսահմանային բարձրագույն կրթության հավատարմագրման համար, համոզված լինելով, որ որակի ապահովումը և անդրսահմանային բարձրագույն կրթության տրամադրումը ներառում է ինչպես ուղարկող, այնպես էլ՝ ընդունող երկրները:

գ) Որակի ապահովման և հավատարմագրման գործընթացների վերաբերյալ խորհրդակցություն և համակազում ստանալ իրազեկ տարբեր մարմիններից՝ ինչպես ազգային, այնպես էլ՝ միջազգային մակարդակներում:

դ) Տրամադրել ճշգրիտ, վստահելի և հասանելի տեղեկատվություն գրանցման, լիցենզավորման, որակի ապահովման և անդրսահմանային բարձրագույն կրթության չափորոշիչների և չափանիշների վերաբերյալ, վերջիններիս՝ ուսանողների, հաստատությունների կամ ծրագրերի վրա ունեցած հետևանքների և կամավոր կամ պարտադիր բնույթի վերաբերյալ:

ե) Դառնալ մասնակից և նպաստել ՅՈՒՆԵՍԿՕ-ի որակավորումների ճանաչման մասին համապատասխան տարածաշրջանային կոնվենցիայի մշակմանը կամ թարմացմանը և ստեղծել ազգային տեղեկատվական կենտրոններ, ինչպես որ նախատեսված է կոնվենցիայով:

զ) Անհրաժեշտության դեպքում մշակել կամ խրախուսել երկկողմանի կամ բազմակողմանի ճանաչման համաձայնագրեր: Հիմնվելով երկկողմանի համաձայնագրի ընթացակարգերի և չափորոշիչների վրա՝ հեշտացնել յուրաքանչյուր երկրի որակավորումների ճանաչումը:

է) Նպաստել ճանաչված բարձրագույն կրթական հաստատությունների/մատակարարների մասին թարմացված, ճշգրիտ և համապարփակ տեղեկատվությունը միջազգային մակարդակով հասանելի դարձնելուն:

## ՏԱԿ_ՌԱ ուղեցույցները կառավարական մակարդակում

I. Հայաստանի և Վրաստանի Կրթության նախարարությունները պետք է մշակեն պարզ քաղաքականություն և կանոնակարգեր իրենց երկրում գործող տրանսազգային կրթության տրամադրողների համար՝ բարձրագույն կրթությունը ավելի հասանելի դարձնելու նպատակով, միևնույն ժամանակ ապահովելով կրթության որակը և համապատասխանությունը:

II. Ե՛վ Հայաստանի, և՛ Վրաստանի օրինական շրջանակները պետք է սահմանեն, թե ինչ է նշանակում բարձրագույն կրթության տրամադրում իրենց կոնկրետ համատեքստում: Տրանսազգային կրթության տրամադրումը կարող է նշանակել ինչպես բարձրագույն կրթության մատակարարում, այնպես էլ այդ կրթության որակի ապահովում: Նախագծի իրականցման արդյունքում դուրս են բերվել ՏԱ կրթության իրականացման հետևյալ ոլորտները.

   Ա. Բարձրագույն կրթական հաստատության մակարդակ.
   - օտարերկրյա մատակարարների կողմից հիմնադրված գլխավոր կամպուսներ,
   - մասնաճյուղային կամպուսներ,
   - միջպետական հաստատություններ,
   - համատեղ համալսարաններ/քոլեջներ,
   - վիրտուալ հաստատություններ:

   Բ.Ծրագրային մակարդակ.
   - ֆրանչայզ,
   - համատեղ շնորհվող աստիճան,
   - օտարերկրյա ԲՈՒՀ-երի կողմից առաջարկվող ուրույն ծրագիր,
   - հեռակա ուսուցում տեղական ակադեմիական գործընկերոջ հետ,
   - վիրտուալ ծրագրեր/դասընթացներ,
   - ինքնավար հեռակա ուսուցում:

   Գ. Որակի արտաքին ապահովման մակարդակ.
   - որակի արտաքին ապահովման համատեղ վերլուծություն օտարերկրյա գործընկերոջ հետ,
   - ԲՈՒՀ-երի և ծրագրերի անկախ արտաքին վերլուծություն՝ օտարերկրյա ՌԱ մատակարարի կողմից:

III. Համագործակցային պայմանավորվածության դեպքում պետք է լինեն գրավոր և օրենքով պարտավորեցնող համաձայնագրեր կամ պայմանագրեր, որտեղ կնշվեն բոլոր գործընկերների իրավունքները և պարտականությունները:

IV. Ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի օրինական շրջանակները պետք է հստակ սահմանեն, թե որ ՏԱԿ մատակարարներին է թույլատրվում մուտք գործել բարձրագույն կրթության շուկա: Վերոգրալից զատ, սույն իրավական շրջանակները նաև պետք է հստակ մատնանշեն այն քաղաքականությունները և կանոնակարգերը, որոնց պետք է համապատասխանի ՏԱԿ մատակարարը՝ համակարգ մուտք գործելու, ինչպես նաև վերջինիս շնորհած որակավորումը ճանաչելի դարձնելու համար:

V. Օրինական շրջանակը ՏԱԿ-ի քաղաքականությունների և կանոնակարգերի հետագա մանրամասնման անհրաժեշտություն կունենա ներոգրյալ դեպքերում.

ա. Անկախ ՏԱԿ մատակարարում. երբ ուղարկող երկիրը առաջնային պատասխանատվություն է կրում ուսումնական ծրագրի, տրված որակավորման և որակի արտաքին ապահովման համար:

բ. Համագործակցային ՏԱԿ տրամադրում. երբ երկու երկրներն էլ՝ և՛ ուղարկող, և՛ հյուրընկալող երկիրը կիսում են կամ ունեն համատեղ պատասխանատվություն ուսումնական ծրագրի, տրվող որակավորումների և որակի արտաքին ապահովման համար:

գ. Մոդելային համակարգի տրամադրումը տեղական մատակարարների կողմից. երբ տեղական մատակարարները փոխառում են կրթության մոդելը, ուսումնական ծրագիրը և տրվող որակավորումը, և որակի արտաքին ապահովումը կատարվում է անկախ, փոխառված համակարգի ՈԱԱ մատակարարի կողմից (օրինակ ՀԱՀ-ն Հայաստանում):

VI. Կրթության նախարարությունները պետք է որակի ապահովման գործընթացների մշակման և իրականացման պատասխանատվությունը պատվիրակեն ՈԱ համապատասխան կառույցներին:

VII. Հաշվի առնելով այն փաստը, որ բարձրագույն կրթության որակի պատասխանատուն կառավարությունն է, նախագծից բխող խորհրդատվություններն առաջարկում են լիցենզավորման, մշտադիտարկման և հավատարմագրման համակարգեր կառավարության կողմից ճանաչված և սահմանված ՏԱԿ մատակարարների տիպերի համար: Ճանաչումը և սահմանումը կհանգեցնի ՏԱԿ-ի հստակ դասակարգմանը ազգային մակարդակում, որի արդյունքում կձևավորվի ազգային ՏԱԿ-ի դասակարգման շրջանակը:

VIII. Ազգային ՏԱԿ-ի դասակարգման շրջանակը պետք է հարուստ բազային տվյալներ տրամադրի տեղեկացված որոշումների կայացման, զարգացման միտումների, ինչպես նաև բուհական մակարդակում մարտահրավերների և հնարավորությունների սահմանազատման գործընթացներում: Համապատասխան նախարարությունները պետք է մշակեն հստակ կարգավորող շրջանակ՝ ապահովելու անաչառ և թափանցիկ գործունեությունը:

IX. Ազգային ՏԱԿ դասակարգման շրջանակը պետք է պարարտ հող նախապատրաստի ուղարկող և ընդունող ՏԱԿ մատակարարների համար ազգային մակարդակում ՏԱԿ գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համար: Տեղեկատվության հավաքագրումը պետք է իրականացվի բուֆերային կառույցի/ՈԱ գործակալությունների կողմից, որոնց թեկնածությունը պետք է հաստատվի և լիազորվի Կրթության նախարարությունների կողմից և որոնք պետք է հաշվետու լինեն Հայաստանի և Վրաստանի Կրթության նախարարություններին:

X. Ինչպես ուղարկող, այնպես էլ ընդունող ՏԱԿ մատակարարների հստակ տարբերակումն և սահմանումն ազգային մակարդակում հետագա զարգացման նախադրյալներ կապահովի: Ե՛վ Հայաստանը, և՛ Վրաստանը պետք է հստակ սահմանեն իրենց ՏԱԿ ռազմավարությունը ազգային մակարդակում:

XI. Ազգային իրավական համակարգերը պետք է նաև հստակ սահմանեն ՏԱԿ մատակարարների կողմից տրամադրված որակավորումների տրման և ճանաչման ընթացակարգը:

XII. ՏԱԿ ՄԿԾ-ների ճանաչման կառուցակարգերից մեկը, որը կհանգեցնի որակավորումների շնորհման, ՄԿԾ-ների դիրքավորումն է տվյալ երկրի սահմաններում հավանության արժանացած ծրագրերի ռեգիստրում, ինչպես նաև դրանց դիրքավորումը որակավորումների

ազգային շրջանակում: ՈԱ որոշումների և ՈԱՇ-ում ՏԱ կրթության դիրքավորման միջև կապի վերաբերյալ որոշում ևս պետք է կայացվի:

## 2. Քաղաքականության ուղենիշները բուհերի մակարդակում

**ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ ուղեցույցները բարձրագույն կրթական հաստատությունների/մատակարարների համար**

Բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների/մատակարարների որակի կարևորումը էական է: Այդ իսկ պատճառով դասախոսական կազմի ակտիվ և կառուցողական մասնակցությունը ՈԱ գործընթացներում անփոխարինելի է: Բարձրագույն կրթական հաստատությունները պատասխանատու են ինչպես որակի, այնպես էլ կրթության հասարակական, մշակութային և լեզվական համապատասխանության և իրենց անունից տրամադրված որակավորումների չափանիշների համար՝ որակավորումների շնորհման ժամանակահատվածից և վայրից անկախ:

Այս համատեքստում, անդրսահմանային բարձրագույն կրթություն տրամադրող բարձրագույն ուսումնական հաստատություններին/մատակարարներին, խորհուրդ է տրվում.

ա) Հավաստիանալ, որ տրամադրած անդրսահմանային և տեղական ծրագրերը համադրելի որակի են, և հաշվի առնել ընդունող երկրի մշակութային ու լեզվական առանձնահատկությունները: Ցանկալի է, որ սույն նախաձեռնությունը հանրայնացվի:

բ) Գիտակցել, որ որակյալ դասավանդումը և հետազոտությունը հնարավոր են միայն որակյալ դասախոսական կազմի և լավ աշխատանքային պայմանների շնորհիվ, որոնք անկախ և քննադատ անձնակազմ ունենալու առհավատչյան են: Բոլոր հաստատությունները և մատակարարները պետք է հաշվի առնեն ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջարկները բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատակազմի կարգավիճակի վերաբերյալ և այլ գործիքներ՝ ապահովելու համար պատշաճ աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմաններ, գործընկերային կառավարում և ակադեմիական/գիտական անկախություն:

գ) Մշակել, պահպանել կամ վերանայել ներկայիս որակի ներքին կառավարման համակարգերը, որպեսզի հնարավոր լինի օգտվել շահագրգիռ կողմերի իրավասություններից, ինչպիսիք են դասախոսական կազմը, վարչական կազմը, ուսանողներ և շրջանավարտներ, և պատասխանատվություն ստանձնել տրամադրելու իրենց երկրում և սահմաններից դուրս մրցունակ բարձրագույն կրթական որակավորումներ: Ավելին, գործակալների միջոցով իրենց կրթական ծրագրերը պոտենցիալ ուսանողներին ներկայացնելիս պետք է ստանձնեն պատասխանատվություն տեղեկատվության և ուղեցույցների ճշգրտության, վստահելիության և հասանելիության համար:

դ) Խորհրդակցել որակի ապահովման և հավատարմագրման իրազեկ մարմինների հետ և հարգել ընդունող երկրի որակի ապահովման և հավատարմագրման համակարգերը՝ անդրսահմանային՝ ներառյալ հեռակա կրթություն տրամադրելիս:

ե) Կիսվել լավագույն փորձով՝ մասնակցելով սեկտորային կազմակերպությունների և միջինստիտուցիոնալ ցանցերին ազգային և միջազգային մակարդակներում:

զ) Մշակել և պահպանել կապեր ու համագործակցություններ ճանաչման գործընթացը հեշտացնելու համար՝ միմյանց որակավորումներ ընդունելով հավասար կամ մրցունակ:

է) Անհրաժեշտության դեպքում օգտագործել լավագույն փորձի կոդեքսը, ինչպիսին է ՅՈՒՆԵՍԿՕ/Եվրոպական խորհրդի տրանսազգային կրթության տրամադրման լավագույն փորձի կոդեքսը և այլ համապատասխան կոդեքսներ, ինչպիսիք են Եվրոպական խորհրդի/ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջարկությունը օտարերկրյա որակավորումների գնահատման չափորոշիչների և գործընթացի վերաբերյալ:

ը) Տրամադրել ճշգրիտ, վստահելի և հասանելի տեղեկատվություն որակի արտաքին և ներքին ապահովման, իրենց կողմից տրամադրվող ակադեմիական ու մասնագիտական որակավորումների ճանաչման չափորոշիչների ու գործընթացների վերաբերյալ և ներկայացնել ծրագրերի ու որակավորումների ամբողջական նկարագրություն, որտեղ նախընտրելի է, որ նշվի գիտելիքը և հմտությունները, որ ուսանողը պետք է ձեռք բերի: Բարձրագույն կրթական հաստատությունները/մատակարարները պետք է համագործակցեն մասնավորապես որակի ապահովման և հավատարմագրման, ինչպես նաև ուսանողական մարմինների հետ՝ այս տեղեկատվությունը տարածելու համար:

թ) Ապահովել առաջարկվող հաստատության և/կամ ծրագրի ֆինանսական վիճակի թափանցելիությունը:

## *ՏԱԿ_ՈԱ ուղեցույցները բարձրագույն կրթական հաստատությունների/մատակարարների համար*

I. ՏԱԿ մատակարարները պետք է ունենան և հրապարակեն որակի ներքին ապահովման հստակ քաղաքականություն, գործընթացներ և կառուցակարգեր: Որակի արտաքին ապահովման հնարավոր մատակարարներին պետք է հստակ ներկայացնեն իրենց կարգավիճակը և համապատասխանությունը ՈԱՇ-ին:

II. ՌՆԱ քաղաքականությունը պետք է ապահովի անաչառ տեղեկատվություն ուսումնական ծրագրի մշակման, որակի ապահովման և որակավորման մասին: Պետք է տրամադրել տեղեկատվություն ազգային ճանաչման մարմինների կողմից շնորհված աստիճանների կարգավիճակի մասին: Վերոգրյալ տեղեկատվության մեջ պետք է նաև զետեղված լինի այն, թե արդյոք ՏԱԿ-ի մատակարարների կողմից առաջարկված ծրագիրը ճանաչվում է որպես ազգային կրթության մատակարարման բաղկացուցիչ մաս:

III. ՏԱԿ մատակարարները պետք է ՌՆԱ չափանիշները մշակեն՝ հիմնվելով «արդարացված տարբերություններ» սկզբունքի վրա, ինչը բարձրագուն կրթության տեղական մատակարարի համատեքստում կապահովի զանազանությունն ու նորարարությունը:

IV. ՌՆԱ պետք է հստակ բացատրի, թե ինչպես են որակավորումները տեղակայված ուղարկող և ընդունող երկրների ՈԱՇ-ների համեմատ:

V. ՏԱԿ մատակարները պետք է ապահովեն ուսանողների և անձնակազմի իրազեկությունը և վերջիններիս զինեն համապատասխան գիտելիքներով որակավորում շնորհող, ինչպես նաև ընդունող երկրի մշակութային առանձնահատկությունների և վարքուբարքի վերաբերյալ:

VI. Գործակալի միջոցով որակավորում առաջարկելու դեպքում (օրինակ՝ տեղական հաստատություն) ՏԱԿ մատակարարները պետք է պատասխանատու լինեն նշանակելու օրինական ներկայացուցիչ, ով կգործի իրենց անունից: ՏԱԿ մատակարարները, ովքեր ներկայացնում են իրենց ծրագրերը գործակալների միջոցով, պետք է կազմեն օրենքով պարտադրվող համաձայնագրեր և պայմանագրեր, որտեղ հստակ նշված է նրանց դերը, պարտականությունները, պատվիրակված գործողության լիազորությունը, ինչպես նաև մշտադիտարկման, արբիտրաժի և դադարեցման դրույթները: Այս համաձայնագրերը և պայմանագրերը կազմվում են հետագայում շահերի բախումներից, ինչպես նաև ուսումնառության վերաբերյալ ուսանողների իրավունքների հակասություններից խուսափելու նկատառումներով:

VII. Պարգևատրող հաստատությունները պետք է պատասխանատու լինեն տրանսազգային ծրագրերի արդյունքում շնորհված իրենց որակավորումների համար: Նրանք պետք է հստակ և թափանցիկ տեղեկատվություն տրամադրեն որակավորումների վերաբերյալ, մասնավորապես դիպլոմի հավելվածի տեսքով, հեշտացնելով որակավորումների գնահատումը իրազեկ ճանաչման մարմինների, այլ բարձրագույն կրթական հաստատությունների, գործատուների և այլքի կողմից: Այս տեղեկատվությունը պետք է ներառի որակավորման հանգեցնող/տանող ուսումնական ծրագրի բնույթը, տևողությունը, ծանրաբեռնվածությունը, տեղը և լեզուն (երը):

VIII. ՏԱԿ մատակարարները պետք է համոզված լինեն, որ տրանսազգային կրթական ծրագրերի կողմից տրված որակավորումները ճանաչվում են կառավարության կողմից և ընդգրկված են ընդունող երկրի պաշտոնական ռեգիստրի մեջ:

## 3. Քաղաքականության ուղենիշներ ուսանողական կառույցների համար

### ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ ուղենիշները՝ նախատեսված ուսանողական կառույցների համար

Որպես անդրսահմանային բարձրագույն կրթության անմիջական սպառողներ և ԲԿ համայնքի ներկայացուցիչներ՝ ուսանողական կառույցները պատասխանատվություն են կրում ինչպես փաստացի, այնպես էլ պոտենցիալ ուսանողներին տեղեկատվության հորձանուտում ուղղորդելու համար, որպեսզի վերջիններս կարողանան մանրազնին ուսումնասիրության ենթարկել առկա տեղեկատվությունը և համապատասխան հետևություններ անեն որոշումների կայացման գործընթացում:

Սույն համատեքստում խորհուրդ է տրվում խրախուսել ինքնավար տեղական, ազգային և միջազգային ուսանողական կառույցների հիմնումը: Այս կառույցները պետք է.

ա. ակտիվ կերպով ներգրավված լինեն անդրսահմանային կրթության որակի զարգացման, վերահսկման և պահպանման գործընթացներում՝ ինչպես միջազգային, ազգային, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակներում: Բոլոր հնարավոր քայլերը պետք է ձեռնարկվեն սույն նպատակին հասնելու համար:

բ. Մասնակցություն ունենալ որակի ապահովման խթանման գործընթացներում՝ բարձրացնելով ուսանողների տեղեկացվածության մակարդակը հնարավոր ռիսկերի վերաբերյալ՝ ինչպիսիք են ապատեղեկատվությունը, ցածրորակ կրթությունը, որն ի վերջո հանգեցնում է սահմանափակ վավերություն ունեցող որակավորումների և վատ հեղինակություն ունեցող մատակարարների գոյության: Վերոգրյալ կառույցները նաև պետք է ուսանողներին մատնացույց անեն անդրսահմանային բաձրագույն կրթության վերաբերյալ ճշգրիտ և վստահելի տեղեկատվության աղբյուրներ: Սույնին կարելի է հասնել բարձրացնելով այս ուղեցույցի վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը և դրա կիրառության մեջ ակտիվ մասնակցությունը:

գ. Փաստացի և պոտենցիալ ուսանողներին խրախուսել հարցադրումներ անել անդրսահմանային այս կամ այն ծրագրում ներգրավվելիս: Ուսանողական կառույցների կողմից կարող է համապատասխան հարցադրումների ցանկ կազմվել՝ օտարերկրյա ուսանողների, ինչպես նաև բուհերի, ՌԱ և հավատարմագրման գործակալությունների և ակադեմիական ճանաչման կառույցների հետ համատեղ: Հարցադրումների ցանկը պետք է ներառի հետևյալ հարցադրումները՝

- արդյոք օտարերկրյա հաստատությունը/մատակարարը հավատարմագրված է վստահության արժանի/ճանաչված կառույցի կողմից,
- արդյոք օտարերկրյա հաստատության/մատակարարի կողմից շնորհված որակավորումները ճանաչվում են ակադեմիական կամ կրթական նկատառումներով ուսանողի երկրում:

### ՏԱԿ_ՌԱ ուսանողական կառույցների համար

I. Ուսանողների ձայնը լսելի դարձնելու նկատառումներով ՏԱ կրթություն իրականացնողները պետք է ուսանողական կառույց հիմնեն, որը ՏԱԿ ուսանողների աջակից մարմինը կլինի և ՏԱԿ ուսանողներին կապահովի օբյեկտիվ տեղեկատվությամբ: Ուսանողական կառույցը պետք է իր ներկայացուցչականությունն ապահովի ՏԱ կրթություն մատակարարող կառույցների որոշումներ կայացնող մարմիններում:

II. Ուսանողական ազգային մարմինները Հայաստանում և Վրաստանում, իրենց իսկ գործունեության շրջանակներում պետք է կազմավորեն հատուկ հանձնաժողով, որը կզբաղվի ՏԱ կրթության խնդիրներով: Ուսանողական ազգային կառույցի կանոնակարգող փաստաթղթում պետք է իրականացվեն համապատասխան կանոնադրական փոփոխություններ, որոնք կխթանեն համապատասխան ուսանողական մարմինների տրանսազգային կրթությունը: Վերոգրյալ փոփոխությունները պետք է հաստատվեն համապատասխան կառավարչական լիազոր մարմինների կողմից:

III. Ուսանողական կառույցները պետք է հանդես գան որպես ՏԱ կրթության մատուցման և վերջինիս որակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վստահելի աղբյուր: Ուստի, ՏԱ կրթության մեջ ներգրավված և ՏԱ որակավորումներ ստացած ուսանողների դիտանկյունից ՏԱ կրթության մատակարարների վերաբերյալ տվյալների հավաքագրման կառուցակարգեր

պետք է մշակվեն: Ուսանողական կառույցներին պետք է հորդորել, որպեսզի վերջիններս զեկույցներ պատրաստեն ՏԱ մատակարարների որակի և վավերականության վերաբերյալ: Սույն զեկույցներում զետեղված տեղեկատվությունը պետք է ներկայացված լինի սպառողների դիտանկյունից: Տվյալները պետք է պարբերաբար հասանելի լինեն հանրությանը:

IV. Ուսանողական կառույցները պետք է ՏԱ կրթության մեջ ներգրավված ուսանողների իրավունքների պաշտպանության համար նախատեսված ուղենիշներ և կառուցակարգեր մշակեն: ՏԱ կրթություն մատակարարող հաստատություններում սովորող ուսանողների իրավունքները պետք է համադրելի լինեն տեղական մասնավոր և պետական բուհերում սովորողների իրավունքների հետ:

V. Ուսանողական կառույցները պետք է պարբերաբար իրականացնեն տեղեկացվածության մակարդակը բարձրացնող արշավներ ՏԱԿ ուսանողների շրջանում՝ ՏԱ կրթության հեռանկարների և առավելությունների վերաբերյալ:

VI. Ուսանողական ազգային կառույցները պետք է ներգրավված լինեն այնպիսի կառույցների աշխատանքներում, ինչպիսիք են որակավորումների ճանաչման, լիցենզավորման և հավատարմագրման մարմինները:

## 4. Քաղաքականության ուղենիշներ որակի ապահովման մարմինների համար

### ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ ուղենիշները՝ նախատեսված որակի ապահովման և հավատարմագրման մարմինների համար

Ի հավելումն հաստատությունների/մատակարարների որակի ներքին կառավարմանը, ավելի քան 60 երկրներում որդեգրվել են հաստատությունների որակի արտաքին ապահովման և հավատարմագրման համակարգեր: Որակի ապահովման և հավատարմագրման կառույցները պատասխանատու են բարձրագույն կրթության տրամադրման որակի գնահատման համար: Որակի ապահովման և հավատարմագրման գործող համակարգերը հաճախ տարբերվում են ըստ երկրների և երբեմն անգամ երկրի ներսում: Որոշ երկրներ ունեն որակի ապահովման և հավատարմագրման կառավարական մարմիններ, մյուսներն ունեն հասարակական կառույցներ: Բացի այդ, գոյություն ունեն նաև որոշ տարբերություններ կիրառվող եզրութաբանության, «որակ» եզրի սահմանման, համակարգի նպատակի և գործառույթի, այդ թվում ուսանողների հետ վերջինիս առնչության, հաստատությունների կամ ծրագրերի ֆինանսավորման, որակի ապահովման և հավատարմագրման համար կիրառվող մեթոդաբանության, պատասխանատու մարմնի կամ օղակի գործունեության շրջանակի և մասնակցության կամավոր կամ պարտադիր բնույթի վերաբերյալ: Սույն բազմազանությունը հարգելով հանդերձ՝ անհրաժեշտ է նաև համատեղել ուղարկող և ընդունող երկրների ջանքերն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ համաշխարհային մակարդակներում, բարձրագույն կրթության անդրսահմանային մատակարարման աճով պայմանավորված մարտահրավերներին դիմակայելու համար:

Այս համատեքստում առաջարկվում է որակի ապահովման և հավատարմագրման կառույցներին՝

ա) ապահովել, որ իրենց որակի ապահովման և հավատարմագրման գործողությունները ներառեն անդրսահմանային կրթության տրամադրումն իր տարբեր դրսևորումներով: Սա ենթադրում է ուշադրության կիզակետում պահել հավատարմագրման ուղեցույցները,

ապահովել, որ չափանիշներն ու գործընթացները լինեն թափանցիկ, համահունչ և համապատասխան՝ նկատի առնելով ազգային բարձրագույն կրթության համակարգի ձևն ու շրջանակը, ինչպես նաև հարմարեցված լինեն անդրսահմանային կրթության փոփոխություններին և զարգացումներին:

բ) Պահպանել և ամրապնդել տարածաշրջանային և միջազգային առկա ցանցերը կամ հաստատել տարածաշրջանային ցանցեր այն շրջաններում, որտեղ այդպիսիք առկա չեն: Այս ցանցերը կարող են տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակման, գիտելիք տարածելու, միջազգային զարգացումների և մարտահրավերների ընկալումն ընդլայնելու, ինչպես նաև աշխատակազմերի և որակը գնահատողների մասնագիտական փորձի բարելավման համար հավուր հարթակ հանդիսանալ: Միևնույն ցանցերը կարող են նաև որպես հարթակ հանդես գալ անբարեխիղճ և կասկածելի հեղինակություն ունեցող որակի ապահովման և հավատարմագրման մարմինների մասին իրազեկվածության տարածման, ինչպես նաև վերոգրյալ արատավոր կառույցների բացահայտմանն ուղղված վերահսկման և հաշվետվողականության համակարգերի մշակման համար:

գ) Հաստատել կապեր՝ ուղարկող և ընդունող երկրների կառույցների միջև համագործակցությունն ամրապնդելու և որակի ապահովման ու հավատարմագրման տարբեր համակարգերի վերաբերյալ փոխըմբռնումը բարձրացնելու համար: Այս ամենը կարող է պարզեցնել տարբեր երկներում գործող ծրագրերի և հաստատությունների որակի ապահովման գործընթացը՝ հաշվի նստելով նաև ընդունող երկրների որակի ապահովման և հավատարմագրման տարբեր համակարգերի հետ:

դ) Տրամադրել ճշգրիտ և հասանելի տեղեկատվություն հավատարմագրման չափորոշիչների, ընթակարգերի և, ըստ անհրաժեշտության, ուսանողների, կառույցների և ծրագրերի ֆինանսավորման վրա որակի ապահովման կառուցակարգերի ունեցած հետևանքների, ինչպես նաև հավատարմագրման արդյունքների վերաբերյալ: Որակի ապահովման և հավատարմագրման կառույցները պետք է համագործակցեն այլ դերակատարների հետ՝ հատկապես բարձրագույն կրթության կառույցների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողական մարմինների և ակադեմիական ճանաչման մարմինների միջև՝ խթանելու վերոգրյալ տեղեկատվության տարածումը:

ե) Կիրառել անդրսահմանային բարձրագույն կրթության ընթացիկ միջազգային փաստաթղթերում արտացոլված սկզբունքները, օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ/Եվրոպական խորհրդի Տրանսազգային կրթության տրամադրման գործելակերպի կանոնները:

զ) Հասնել փոխճանաչման համաձայնությունների կնքման այլ կառույցների հետ՝ հիմնվելով վստահության և փոխադարձ մասնագիտական փորձի ճանաչման վրա, մշակել որակի ներքին ապահովման համակարգեր և պարբերաբար անցնել արտաքին գնահատումներ՝ ամբողջովին կիրառելով շահակիցների կարողությունները: Ըստ հնարավորության, ձեռնարկել միջազգային հավատարմագրման փորձեր, կամ որակի ապահովման և հավատարմագրման կառույցների փոխադարձ վերանայումներ:

է) Ձեռնամուխ լինել որոշակի ընթացակարգերի որդեգրմանը՝ փոխադարձ վերանայումների հանձնաժողովների միջազգային կազմի ապահովման, ինչպես նաև չափորոշիչների, չափանիշների և հավատարմագրման ընթացակարգերի միջազգային բենչմարքի նպատակով և իրականացնել համատեղ հավատարմագրման նախագծեր՝ ընդլայնելու որակի ապահովան և հավատարմագրման տարբեր կառույցների գնահատման գործընթացների համադրելիությունը:

**ՏԱԿ_ՌԱ ուղենիշները որակի ապահովման և հավատարմագրման մարմինների համար**

I. Հայաստանում և Վրաստանում ՌԱ տրանսազգային մատակարարումը պետք է հստակ արտացոլված լինի ազգային մակարդակում գործող քաղաքականություններում և պետք է իրականացվի 3 մակարդակում.

ա. առաջնային մակարդակ՝ լիցենզավորում,

բ. կիրառման մակարդակ՝ վերահսկողություն և ՏԱԿ մատակարարում,

գ. հաշվետվողականության նպատակներ՝ ՏԱԿ մատակարարման հավատարմագրում:

II. Տրանսազգային մատակարարների որակի արտաքին ապահովման ուղենիշային սկզբունքները.

ա. թափանցիկություն և տեղեկատվություն հանրությանը,

բ. գնահատման հետևողականություն,

գ. մատուցված կրթական ծառայության համադրելիություն,

դ. տվյալների հավաքագրման և վերլուծման ճշգրտություն:

III. Հայաստանի և Վրաստանի ՌԱԱ, ՌԱԱԿ-ը և ԿՌԽԱԿ-ը պետք է հստակ քաղաքականություն ունենան անդրսահմանային տարատեսակ մատակարարների հավատարմագրման և որակի ապահովման գործընթացներում իրենց իսկ դերակատարության նկարագրման համար:

IV. Որակի արտաքին ապահովումը պետք է մշակի ՏԱ կրթության չափանիշներ՝ հենվելով «արդարացված տարբերություններ» սկզբունքի վրա՝ որը հնարավորություն կընձեռի բազմազանություն և նորարարություն ներմուծել բարձրագույն կրթության տեղական մատակարարման գործընթաց:

V. ՏԱԿ ուսումնական ծառայությունների և ՄԿԾ-ների ճանաչման գործընթացի անխափան իրականացման համար, գործող քաղաքականությանը զուգահեռ պետք է կիրարկվեն հստակ ուրվագիծ ունեցող գործընթացներ՝ ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ՝ ծրագրային մակարդակում: Վերոգրյալ գործընթացները կարող են ծածկել ստորև ներկայացված կառուցակարգերը.

ա. համատեղ գնահատում,

բ. փոխճանաչում,

գ. օտարերկրյա ՌԱ մատակարարի կողմից իրականացված անկախ արտաքին գնահատման արդյունքների ճանաչում,

դ. անկախ գնահատում՝ իրականացված ՌԱԱ ազգային մատակարարի կողմից:

Վերոգրյալ յուրաքանչյուր կառուցակարգի համար ՌԱԱԳ-ները պետք է համապատասխան գործընթաց սահմանեն, որն ուղենիշային կլինի ՏԱ կրթության մատակարարի համար:

VI. ՈԱԱԳ-ները պետք է ենթահանձնաժողովներ կազմավորեն ՏԱ կրթության հարցերով զբաղվող և ազգային մակարդակում գործող հավատարմագրման հանձնաժողովների կազմում:

VII. ՈԱԱԳ-ները պետք է որակավորումներ շնորհող և ճանաչման մարմինների հետ գործակցության հստակ կառուցակարգեր ունենան և պետք է ապահովեն իրենց ներկայացուցչությունը ազգային մակարդակում գործունեություն ծավալող նմանօրինակ հանձնաժողովներում:

VIII. ՈԱԱԳ-երը ազգային ուսանողական մարմիններից ներկայացուցչություն պետք է ապահովեն ՏԱ կրթության վերաբերյալ որոշում կայացնող մարմինների կազմում:

IX. ՈԱԱԳ-երը պետք է ՏԱ կրթության վերաբերյալ համապատասխան տվյալներ հավաքագրեն և ՏԱԿ մատակարարման վերաբերյալ պարբերական զեկույցներ կազմեն:

X. ՈԱԱԳ-երը պետք է ՈԱԱԳ-ների ազգային, տարածաշրջանային և միջազգային ցանցերի անքակտելի մաս կազմեն և համագործակցության կառուցակարգեր ունենան Որակի արտաքին ապահովման գործակալությունների, ՏԱ կրթություն իրականացնող տարածաշրջանային և միջազգային ցանցերի հետ, ինչը ՏԱԿ մատակարարների վերաբերյալ անհրաժեշտ անաչառ և թափանցիկ տեղեկատվության փոխանակման միակ առհավատչյան է:

## 5. Քաղաքականության ուղենիշներն ակադեմիական ճանաչման մարմինների համար

### ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ ուղենիշները՝ նախատեսված ակադեմիական ճանաչման կառույցների համար

ՅՈՒՆԵՍԿՕ-ի որակավորումների ճանաչման տարածաշրջանային կոնվենցիաները կարևոր գործիքներ են բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման գործընթացը առավել դյուրին դարձնելու ճանապարհին: Սրանք նաև օգտագործվում են ուսանողների, հմուտ մասնագետների անդրսահմանային շարժունության արդյունքում օտար երկրներում շնորհված որակավորումների փոխճանաչման գործընթացում:

Ցայս պահը գոյություն ունեցող նախաձեռնությունները պետք է համալրվեն միջազգային այլ գործընթացներով՝ որոնք կխթանեն ակադեմիական որակավորումների անաչառ փոխճանաչումը՝ սույնով համակարգերն առավել թափանցիկ և համադրելի դարձնելով:

Այս համատեքստում ակադեմիական փոխճանաչման կառույցներին խորհուրդ է տրվում.

ա. Հիմնել և պահպանել տարածաշրջանային և միջազգային ցանցեր, որոնք կարող են լավագույն փորձի, գիտելիքի տարածման, միջազգային զարգացումների գիտակցման և վերջիններիս մարտահրավերների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման համար հարթակ հանդիսանալ: Սույն հարթակում փոխանակվող տեղեկատվությունը նաև կխթանի համապատասխան հաստատությունների անձնակազմերի մասնագիտական փորձառությունը:

բ. Ամրապնդել գործակցությունը որակի ապահովման և հավատարմագրման մարմինների հետ՝ նպատակ հետապնդելով դյուրինացնել այն գործընթացը, որը միտված է վերհանել, թե արդյոք այս կամ այն որակավորումը համապատասխանում է որակի նախանշված մինիմալ չափորոշիչներին, թե՝ ոչ: Վերոգրյալից զատ, պետք է նաև որակի ապահովման և հավատարմագրման մարմինների հետ իրականացնել անդրսահմանային գործակցություն և կապերի հաստատում: Նման գործակցություն պետք է իրականացվի ինչպես ազգային, այնպես էլ՝ անդր-տարածաշրջանային մակարդակում:

գ. Շահակիցների հետ կապեր հաստատել և դրանք պահպանել՝ տեղեկատվության համօգտագործման, ինչպես նաև կրթական և մասնագիտական որակավորումների գնահատման մեթոդաբանության միջև կապերի բարելավման նկատառումներով:

դ. Հնարավորության սահմաններում անդրադարձ կատարել որակավորումների մասնագիտական ճանաչմանը աշխատաշուկայում, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել մասնագիտական ճանաչման վերաբերյալ՝ ինչպես այն անձանց, ովքեր ունեն օտար որակավորում, այնպես էլ՝ գործատուներին: Միջազգային աշխատաշուկայի ընդգրկվածության ընդլայնման, ինչպես նաև շարունակաբար աճող մասնագիտական շարժունության լույսի ներքո, մասնագիտական ասոցիացիաների հետ գործակցությունը և համակարգումը օրհասական են:

ե. Օգտագործել ԵԽ/ՅՈՒՆԵՍԿՕ «Խորհրդատվություններն օտարերկրյա որակավորումների գնահատման չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ», ինչպես նաև համապատասխան այլ փաստաթղթեր՝ խթանելու հասարակության վստահությունը փոխճանաչման գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև հավաստիացնելու շահակիցներին, որ ողջ գործընթացն իրականացվում է արդար և հետևողական:

զ. Որակավորումների (ներառյալ անդրսահմանային կրթության արդյունքում ստացված որակավորումները) գնահատման չափորոշիչների վերաբերյալ տրամադրել պարզ, ճշգրիտ և մատչելի տեղեկատվություն:

### ՏԱԿ_ՌԱ ուղենիշներն ակադեմիական փոխճանաչման մարմինների համար

I. Ազգային լիազոր կառույցները պետք է մատնանշեն, թե որ մարմինն է պատասխանատու ՏԱ կրթության շնորհած որակավորման ճանաչման համար: Սովորաբար նման գործընթացն իրականացնում են ազգային ճանաչման մարմինները (ազգային ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ կառույցներ):

II. ՏԱ կրթության շնորհած որակավորումների ճանաչման համար պետք է մշակվեն և կիրարկվեն հստակ քաղաքականություններ և գործընթացներ: Վերոգրյալները պետք է հասանելի լինեն հասարակությանը: Սույն քաղաքականությունները և գործընթացները պետք է խստագույնս հետևեն բարձրագույն կրթության ճանաչման տարածաշրջանային կոնվենցիաներում արծարծված սկզբունքներին:

III. Ճանաչումը պետք է համահունչ լինի ՏԱԿ մատակարարների գրանցմանը ՌԱՇ-ին, եթե այն գործում է և գործառնական է: Ազգային մակարդակում պետք է գոյություն ունենա համապատասխան գործընթաց, որը հնարավորություն կընձեռի ՏԱԿ որակավորումները տեղակայել ազգային ՌԱՇ-ի շրջանակների ներքո:

## 6. Քաղաքականության ուղենիշները մասնագիտական մարմինների համար

### ՅՈՒՆԵՍԿՕ/ՏՀԶԿ ուղենիշները՝ նախատեսված մասնագիտական կառույցների համար

Մասնագիտական ճանաչման համակարգերը տարբերվում են երկրից երկիր և մասնագիտությունից մասնագիտություն: Օրինակ՝ որոշ դեպքերում ակադեմիական որակավորումը կարող է բավարար լինել մասնագիտական գործունեության ոլորտ մուտք գործելու համար, մինչդեռ, կան դեպքեր, երբ անհրաժեշտ են այլ՝ հավելյալ պահանջներ: Միջազգային աշխատաշուկայի ծավալների օրեցօր աճի, ինչպես նաև մասնագիտական շարժունության մեծացման լույսի ներքո, ակադեմիական որակավորումներ ունեցող անձանց, ինչպես նաև գործատուների ու մասնագիտական ասոցիացիաների առջև ծառանում են մեծաթիվ մարտահրավերներ: Այս համատեքստում, թափանցիկության խթանումը՝ մասնավորապես տեղեկատվության որակի բարձրացումն ու դրա մատչելիությունը, առանցքային են ճանաչման գործընթացներում:

Այս համատեքստում ակադեմիական մասնագիտական կառույցներին խորհուրդ է տրվում.

ա. Մշակել տեղեկատվության ուղիներ, որոնք հասանելի կլինեն ինչպես ազգային, այնպես էլ՝ օտարերկրյա որակավորում ունեցող անձանց: Սույնը նպատակ է հետապնդում աջակցել վերոգրյալ անձանց իրենց որակավորումների մասնագիտական ճանաչման գործընթացում: Այս կերպ նաև օգնություն է տրամադրվում այն գործատուներին, որոնք որոշակի խորհրդատվության կարիք ունեն օտարերկրյա որակավորումների ճանաչման

գործընթացում: Տեղեկատվությունը նաև պետք է հասանելի լինի ինչպես ներկայիս, այնպես էլ՝ ապագա ուսանողներին:

բ. Կապեր հաստատել ուղարկող և ընդունող երկրների, բուհերի/բարձրագույն կրթության մատակարարների, որակի ապահովման և հավատարմագրման կառույցների, ինչպես նաև ակադեմիական ճանաչման մարմինների հետ, և քայլեր ձեռնարկել վերոգրյալ կապերի պահպանման և ամրապնդման ուղղությամբ: Սույնը միտված է որակավորումների գնահատման մեթոդաբանության բարելավմանը:

գ. Մշակել, զարգացնել և կիրառել գնահատման չափանիշներ և ընթացակարգեր՝ միտված ծրագրերի և որակավորումների համադրմանը՝ դյուրինացնելու որակավորումների ճանաչումը, ինչպես նաև տեղայնացնելու մշակութայնորեն ընդունելի ուսուցման ակնկալվող վերջնարդյունքները և հմտությունները, որոնք հավելյալ նախապայման են գործընթացի գոյություն ունեցող պահանջների համար:

դ. Միջազգային մակարդակում բարելավել մասնագիտությունների ճանաչման փոխադարձ համաձայնագրերի վերաբերյալ թարմացված, ճշգրիտ և ամբողջական տեղեկատվությունը, ինչպես նաև խթանել նոր համաձայնագրերի մշակումը:

## ՏԱԿ_ՈԱ ուղենիշները մասնագիտական կառույցների համար

I. Գործընթացում ներգրավված մասնագիտական կառույցները ՏԱ կրթության[1] արդյունքում շնորհված որակավորում ունեցող մասնագետների որակավորումների լիցենզավորման և ճանաչման համար պետք է հավելյալ քաղաքականություններ և գործընթացներ մշակեն՝ ՏԱԿ շրջանավարտների մուտքը մասնագիտական ոլորտ ապահովելու համար:

